Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2024թ-ի 14 նոյեմբերի N 455-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի նոյեմբերի 25–ից

«80% զեղչ սև ուրբաթին՝ Travel Քարտերի համար» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 25.11.2024թ-ից 02.12.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված Travel քարտ, որը պատվիրվել է Արշավի շրջանակներում Idram&IDBank հավելվածի միջոցով՝ 25.11.2024թ-ից 02.12.2024թ-ը ներառյալ:
1.3 **Քարտապան՝** Արշավի շրջանակներում թողարկված Travel Քարտի քարտատեր:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Սույն Արշավի ընթացքում՝ 25.11.2024թ-ից 02.12.2024թ-ը ներառյալ, Idram&IDBank հավելվածի միջոցով պատվիրված Travel քարտերի առաջին տարվա սպասարկման վճարը կզեղչվի 80%-ով: Քարտերի տրամադրման և սպասարկման այլ պայմանները սահմանված են Travel քարտի տեղեկատվական ամփոփագրով:
2.2 Արշավի շրջանակներում Idram&IDBank հավելվածի միջոցով հնարավոր է պատվիրել միևնույն արժույթով միայն մեկ Քարտ:
2.3 Քարտերի գործողության ավարտից հետո կամ Քարտերի գործողության ընթացքում փոխարինման/վերաթողարկման դեպքում գործելու է տվյալ Քարտատեսակի համար այդ պահին Բանկում գործող սակագները:
2.4 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: